ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

11.06.2018թ.
N_29_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքապետարանի 19.02.2018թ-ի ավագանու 2-րդ նիստի թիվ 6,7,8,9, որոշումները:

Առդիր 6 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__19__» ____02____2018թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2-ՐԴ ՆԻՍՏԻ N 6,7,8, 9, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

19.02.2018թ. ՆԻՍՏ N 2

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարքնի ավագանու արտահերթ նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր չորս հարցից:

1.Խաչաղբյուր համայնքապետարանի աշխատակիցների ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույցը հաստատելու մասին:
Զեկուցող՝ Ս. Գալստյան:

2.Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, զբաղվածության, նորածին երեխաներին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու մասին:
Զեկուցող՝ Ս. Գալստյան:

3. Մարզային օլիպիադաներին մասնակցելու համար Խաչաղբյուր համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտներին ֆինասական օգնություն ցուցաբերելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

4. Համայնքի արոտավայրերի ջրարբիացման համար ներդրում կատարելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Չեռնպահ:

1. Վ. Խաչատրյան
2. Տ. Գաբոյան
3. Ա. Գաբոյան
4. Գ. Խաչատրյան
5. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՁԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 6

Լսեցին. Խաչաղբյուր համայնքապետարանի աշխատակիցների ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույցը հաստատելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանին

որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ փոխ. վարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թ-ի հունվարի 19-ին N03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետի պահանջով ստեղծել ժամանակացույց Խաչաղբյուր համայնքապետարանի ամենամյա արձակուրդի վերաբերյալ:

h/h	անուն, ազգանուն	պաշտոն	ամենամյա արդակուրդի տրամադրման ժամանակացույց
1	Գալստյան Սերգո	համայնքի ղեկավար	սեկտեմբեր
2	Զաքարյան Նվեր	Համայնքապետարանի աշխատակազմի քառտուղար 1-2-1	հոկտեմբեր
3	Պետրոսյան Պետրոս	Գլխավոր-մասնագետ՝ 2-3-1	նոյեմբեր
4	Ասատրյան Մարինե	Կրտ. պաշտ. 1-ին կարգի մասնագետ 3-1-2	հունիս
5	Խաչատրյան Տոնո	Կրտ. պաշտ. 2-րդ կարգի մասնագետ 3-2-1	մարտ
6	Մարտիրոսյան Վախթանգ	Առաջատար մասնագետ 3-1-1	ապրիլ
7	Գաբոյան Սոս	մշակույթի տան տնօրեն	մայիս
8	Գալստյան Մարիամ	Գրադարանավար	հուլիս
9	Ղազարյան Հարբիկ	Կոմունալ ծառայության աշխատակից	դեկտեմբեր
10	Մխիթարյան Հասմիկ	Պահակ-հավաքարար	օգոստոս

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Չեռնպահ:

1. Վ. Խաչատրյան
2. Տ. Գաբոյան
3. Ա. Գաբոյան
4. Գ. Խաչատրյան
5. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 7

Լսեցին-2.Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, զբաղվածության, նորածին երեխաներին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ բնակիչության շրջանում համապատասխան ուսումնասիրություններից պարզվում է, որ արտագաղթի հիմնական պատճառը գործազրկությունն ու զբաղվածության պակասն է, որը իր հերթին բերում է սոցիալ- տնտեսական վիժակի վաթարացման: Այն առավել ընդգծված է երիտասարդության շրջանում, որոնք աշխատանք են փնտրում հանրապետությունից դուրս: Փաստերը ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնողներից ոմանք նախընտրում են չվերադառնալ, որը տարեց-տարի աճի միտում ունի: Առկա փաստերը բերում են ամուսնությունների նվազման:

Զեկուցողը առաջարկեց հարավորության սահմաններում ամեն ինչ անել բնակչության՝ հատկապես երիտասարդության շրջանում, զբաղվածության տոկոսը բարձրացնելու համար:

Համայնքի ղեկավարը առաջարկեց համայնքի բնակիչ հանդիսացող ամեն առաջին ր երկրորդ նորածինների համար համայնքի բյուջեից հատկացնել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, հաջորդ ծնված ամեն մեկ երեխայի դեպքում գումարը կրկնապատկել:

Հարցի կարևորությունը լսելուց հետո ավագանին

Որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի վերը նշած առաջարկին :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Չեռնպահ:

Վ. Խաչատրյան

Տ. Գաբոյան

Ա. Գաբոյան

Գ. Խաչատրյան

Պ. Զաքարյան

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 8

Լսեցին- 3. Մարզային օլիպիադաներին մասնակցելու համար Խաչաղբյուր համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտներին ֆինասական օգնություն ցուցաբերելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Զեկուցողը ներկայացրեց համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտների մասնակցությունը մարզային օլիմպիադաների կարևորության մասին և առաջարկեց համայնքի բյուջեից 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել դպրոցի աշակերտներին , որպես տրանսպրտի ծախս մարզային օլիպիադաներին մասնակցելու համար:

Քննարկման արդյունքում ավագանին

որոշեց՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեից 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել դպրոցի աշակերտներին , որպես տրանսպրտի ծախս մարզային օլիպիադաներին մասնակցելու համար:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ	ԴԵՄ	Չեռնպահ:
Վ. Խաչատրյան		
Տ. Գաբոյան		
Ա. Գաբոյան		
Գ. Խաչատրյան		
Պ. Զաքարյան		

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 9

Լսեցին-4 Համայնքի արոտավայրերի ջրարբիացման համար ներդրում կատարելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց Խաչաղբյուր համայնքի արոտավայրերի ջրարբիացման կարևորության մասին և համայնքի ավագանուն իրազեկեց իր պայմանավորվածությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության (գյուղատնտեսական ծրագրերի իրազեկման գրասենյակ) պետական հիմնարկի ի դեմս տնօրենի տեղակալ Արմեն Վանյանի, որ գործում է համաձայն «ԳՇԻԳ» ՊՀ_ի կանոնադրությամբ :

Պայմանագրի համաձայն «ԳՇԻԳ» ՊՀ-ի կողմից վճարվող ընդանուր գումարի չափը կազմում է 80303500 (ութսուն միլիոն երեք հարյուր երեք հազար հինգ հարյուր)ՀՀ դրամ:

Համայնքի արոտավայրերի ջրարբիացման համար համայնքի կողմից կատարվող ներդրումների ընդհանուր գումարի չափը կազմում է 4226500 (չորս միլիոն երկու հարյուր քսան վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Զեկուցողը առաջարկեց ավագանուն համաձայնություն տալ՝ որպես ներդրում համայնքի բյուջեից ծրագիրն իրականացնելու համար հատկացնել 4226500 (չորս միլիոն երկու հարյուր քսան վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Քննարկման արդյունքում ավագանին

որոշեց՝

Տալ համաձայնություն համայնքի բյուջեից 4226500 (չորս միլիոն երկու հարյուր քսան վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ հատկացնել համայնքի արոտավայրերի ջրարբիացման ծրագիրը իրականացնելու համար, որպես ներդրում

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Չեռնպահ:

Վ. Խաչատրյան

Տ. Գաբոյան

Ա. Գաբոյան

Գ. Խաչատրյան

Պ. Զաքարյան

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԱԼՍՏՅԱՆ